յիշեալ ուսուցիչներին իւր վերաբերմունքը դէպի ժամանակակից մանկավարժութիւնը. այդ այն է, թէ հէնց իւր՝ Սինօդի ցանկութիւնն է, որ կրօնական ուսմունքը աւանդուի մանկավարժութեան հիմնական սկզբունքների համապատասխան, առանց դէմ լինելու այն բոլոր բարի և յառաջադիմական վերաբերմունքներին, որոնք ուսուցիչները, կտածեն դէպի կրօնի դասաւանդումը: Այսպիսով Սինօդը յոյս ունի, որ սաքսոնական ուսուցիչների այն մի մասի վերաբերմունքը, որ կայ դէպի Սինօդը, կվերանայ և մօտիկ ապագայում երկուստեք փոխադարձ վստահութիւն ու կատարեալ համերաշխութիւն կտիրէ:

Սակսոնիոյ ուսուցիչները, սակայն, դեռ ոչ մի վստահութիւն դէպի Սինօդը չեն ցոյց տուել: Եւ նոյն իսկ Դրեզդէնի ուսուցչական միութիւնը Սինօդին ուղղած իւր պատասխանի մէջ մտցրել է այն բանաձևը, թէ եթէ այսուհետև էլ պիտի կրօնի ուսումը տարուի Սինօդին հաճելի եղանակով, այսպիսով մեծ վնաս կհասնի գերմանական ժողովրդի կրօնական զարգացմանը: Դրեզդէնի ուսուցիչների կարծիքով Սինօդի որոշումը չի համապատասխանում ամբողջ ժողովրդի տրամադրութեան, այլ դա միայն ամենանեղ հայեացքի տէր Օրթոդոքս համարուածների կարծիքն է:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ծննդեան տօնն Անգլիայում.

«Բիւզանդիոն»-ը իւր դեկտ. 8-ի համարում՝ նիւթ վերցնելով «Թայմզ»ից գրում է, որ Ծննդեան տօնն Անգլիայում արդէն կորցրել է իւր նախկին բնաւորութիւնը, երբ իւրաքանչիւր անգլիացի իւր աղդային—կրօնական պարտքն էր համարում լինել այդ օրը իւր հայրենի յարկի տակ, իւր մերձաւորների հետ: Ներկայումս արդէն այդ օրը և ընդհանրապէս Ծննդեան արձակուրդները դար-

ձել են ճանապարհորդելու մի ժամանակամիջոց։ Եւ դա շնորհիւ այն հանգամանքի, որ առօրեայ լարուած զբաղմունքներից յետոյ անգլիացու համար երբ գալիս են հանգըստի մի քանի օրեր, նա այլևս չի կարողանում շարունակել մնալ իւր մշտական տեղում, մանաւանդ որ շնորհիւ երկաթուղային ու շոգենաւային հաղորդակցութեանց զարգացման, նա ճանապարհորդութեան դուրս գալու մեծամեծ դիւրութիւններ ունի։

Պէտք է նկատել, որ այս սովորութիւնը ոչ միայն անգլիացոց մէջ կայ, այլ դա ընդհանուր մի երևոյթ է ամբողջ Եւրոպայում։